ՏԵՂԵԿԱՑՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ – ՊՏՈՒԿԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ

Յուցումներ

Սա տեղեկացված համաձայնության վերաբերյալ փաստաթուղթ է, որը պատրաստվել է Ձեզ օգնելու տեղեկանալ պտուկների վերականգնման վիրահատության, դրա հետ կապված ռիսկերի, ինչպես նաև այլընտրանքային բուժումների մասին: Կարևոր է, որ այս տեղեկատվությունը կարդաք ուշադիր և ամբողջապես:

Ընդհանուր տեղեկատվություն

Պտուկի վերականգնումը կատարվում է վնասվածքի, քաղցկեղի կամ այլ հիվանդության պատճառով պտուկ- արեոլային հատվածի կորուստը վերականգնելու համար: Առկա են մի շարք վիրահատական մեթոդներ պտուկը և այն շրջապատող արեոլային հյուսվածքը վերականգնելու համար: Սա ներառում է մարմնի այլ մասերից վերցված մաշկի գրաֆտները, տեղային մաշկալաթերը կամ մյուս պտուկ-արեոլային հատվածից հյուսվածքի կիսումը: Լրացուցիչ մեթոդներ, ինչպիսին է տատուաժը, կարող են, անհրաժեշտության դեպքում, օգտագործվել հյուսվածքին գույն տալու համար:
Պտուկների վերականգնումը կարող է կատարվել որպես առանձին վիրահատական միջամտություն կամ համատեղվել այլ կրծքերի վերականգման վիրահատությունների հետ:

Այլընտրանքային բուժումներ

Այլընտրանքային բուժումը կներառի վիրահատության չենթարկվելը կամ արտաքին կրծքային պրոտեզների օգտագործումը:

Պտուկների վերականգնման վիրահատական ռիսկեր

Յուրաքանչյուր վիրահատություն ենթադրում է որոշակի ռիսկեր, և կարևոր է հասկանալ այս ռիսկերը և դրանց հետ կապված բարդությունները: Բացի այդ, յուրաքանչյուր վիրահատական միջոց ունի իր սահմանափակումները: Վիրահատության ենթարկվելու անհատի որոշումը հիմնվում է հնարավոր առավելությունների և ռիսկերի համեմատության վրա: Չնայած հիվանդների մեծամասնությունը չի ունենում նման բարդություններ, Դուք պետք է դրանցից յուրաքանչյուրը քննարկեք Ձեր պլաստիկ վիրաբույժի հետ՝ հասկանալու պտուկների վերականգնողական վիրահատության հնարավոր բոլոր հետևանքները:

««ԲՈՒԺՇԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՌԻՍԿԵՐ» հավելված թիվ N 2» հաստատված է «ԱՐԶ ԷՍԹ» ՍՊԸ-ի կողմից 02.05.2019թ. թիվ 01/5 հրամանով: Սույնը հանդիսանում է «ԱՐԶ ԷՍԹ» ՍՊԸ-ի և Պատվիրատուի հետ կնքված պայմանագրի անբաժանելի մասը:

<u>Պտուկների վերականգնման վիրահատությանը ներհատուկ ռիսկեր</u>

Սպիացում

Բոլոր վիրահատությունները սպիեր են առաջացնում, որոշներն ավելի տեսանելի, քան մյուսները: Չնայած վերքերի նորմալ լավացում է ակնկալվում վիրահատությունից հետո, աննորմալ սպիեր կարող են առաջանալ մաշկի և խորը հյուսվածքների մեջ: Սպիերը կարող են լինեն ոչ գրավիչ և տարբեր գույն ունենալ, քան դրանց շրջապատող մաշկի գույնը: Սպիերը կարող են լինել ասիմետրիկ (մարմինի աջ և ձախ մասերում տարբեր կերպ երևալ): Կարերից մաշկի վրա տեսանելի սպիերի առաջացման հնարավորություն կա: Որոշ դեպքում սպիերը կարող են պահանջել վիրահատական կամ այլ բուժում:

Մաշկի գրաֆտներ

Որոշ պտուկի վերականգնման մեթոդների ժամանակ օգտագործում են մաշկի գրաֆտներ: Գրաֆտի համար օգտագործվող մաշկի հատվածը կարող է ունենալ մնացորդային սպիացում, վատ ապաքինված լինել կամ ունենալ ոչ սովորական գույն: Հիվանդները նշել են խրոնիկ քորի մասին: Ինֆեկցիայի կամ այլ պատճառներով կարող է առաջանալ մաշկի գրաֆտի կորուստ: Լրացուցիչ մաշկի գրաֆտներ կարող են պահանջվել:

Մազերի աճ

Պտուկների վերականգնման ժամանակ օգտագործվող մաշկի գրաֆտները կարող են պարունակել մազի ֆոլիկուլներ: Վերականգնված պտուկների վրա կարող է առաջանալ ոչ գրավիչ մազածածկույթ: Մազի ֆոլիկուլները հեռացնելու համար լրացուցիչ բուժում կարող է պահանջվել:

Տատուներ

Եթե տատուաժ պահանջվի որպես լրացուցիչ միջոցառում, գուցե հնարավոր չլինի համապատասխանեցնել մյուս պտուկ-արեոլային համալիրի գույնին և տեքստուրային:

Պտուկների զգացողության փոփոխություն

Պտուկների վերականգնումը չի կարող վերականգնել կրծքերի կամ պտուկների նորմալ զգացողություն:

Մաշկի շրջագծի անկանոնություններ

Կարող են առաջանալ շրջագծի և ձևի անկանոնություններ: Տեսանելի և շոշափելի կնճռոտում կարող է նկատվել: Կտրվածքների ծայրերին մնացորդային մաշկի անկանոնությունները կամ “շան ականջները” միշտ հնարավոր են, երբ առկա է չափից

««ԲՈՒԺՇԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՌԻՍԿԵՐ» հավելված թիվ N 2» հաստատված է «ԱՐԶ ԷՍԹ» ՍՊԸ-ի կողմից 02.05.2019թ. թիվ 01/5 հրամանով: Սույնը հանդիսանում է «ԱՐԶ ԷՍԹ» ՍՊԸ-ի և Պատվիրատուի հետ կնքված պայմանագրի անբաժանելի մասը:

դուրս ավելորդ մաշկ: Սա կարող է բարելավվել ժամանակի ընթացքում կամ կարելի է ուղղել վիրահատությամբ:

Կրծքային իմպլանտի վնասում
Կրծքային իմպլանտների վնասում կարող է առաջանալ վիրահատության ժամանակ: Վնասված կամ պատռված իմպլանտի փոխարինման կամ հեռացման վիրահատություն կպահանջվի:

Մյուս պտուկի վնասում
Պտուկի վերականգնման որոշ տեխնիկաներ օգտագործում են մյուս պտուկից վերցված հյուսվածքներ: Հնարավոր է, որ դոնոր պտուկի հատվածքում առաջանա վնասում կամ նորմալ զգացողությունը կորչի:

<u>ՎԻՐԱՀԱՏՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՌԻՍԿԵՐ</u>

Բուժման խնդիրներ
Որոշակի առողջական վիճակներ, սննդակարգային հավելումներ և դեղեր կարող են ուշացնել և ներազդել բուժման վրա: Քաշի հսկայական նվազեցմամբ հիվանդները կարող են ունենալ բուժման ուշացում, որը կարող է հանգեցնել կտրվածքների բացման, ինֆեկցիայի, հյուսվածքների փոփոխության՝ առաջացնելով լրացուցիչ բժշկական օգնության, վիրահատության և երկարաժամկետ հոսպիտալացման կարիք: Շաքարախտով հիվանդները կամ նրանք, ովքեր երկարաժամկետ ընդունում են այնպիսի դեղեր, ինչպիսիք են ստերոիդները, կարող են ունենալ երկարատև բուժման խնդիրներ: Ծխախոտ ծխելը կառաջացնի ապաքինման ուշացում՝ հաճախ հանգեցնելով լրացուցիչ վիրահատության անհրաժեշտության: Կան բուժման հետ կապված ընդհանուր ռիսկեր, ինչպիսին են ուռածությունը, արնահոսությունը, վիրահատության երկարատևությունը և անզգայացումը (անասթեզիան), որոնք կարող են ներառել ավելի երկար բուժում և լրացուցիչ վիրահատություն, երկարատև վերականգնում, գույնի և ձևի փոփոխություն, ինֆեկցիայի հնարավորություն, ինչպես նաև չիրականացված նպատակներ և սպասելիքներ ու հիվանդի համար հավելյալ ծախսեր: Մաշկի զգալի թուլությամբ հիվանդները կարող են ունենալ մաշկի միևնույն թուլություն վիրահատությունից հետո: Մաշկի որակը կամ էլաստիկությունը չի փոխվի և մաշկի թուլության վերադարձ կնկատվի ապագայում որոշակի պահի, որոշների համար՝ անգամ ավելի շուտ: Կան նյարդային վերջույթներ, որոնք կարող են ներգրավվել սպիերի մեջ: Չնայած կարող է մեծ նյարդային վնասվածք չլինել, վերականգման շրջանում փոքր նյարդային վերջավորությունները կարող են դառնալ շատ զգայուն՝ ստեղծելով սպիի հյուսվածքի հետ կապված փոքր

««ԲՈՒԺԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՌԻՍԿԵՐ» հավելված թիվ N 2» հաստատված է «ԱՐԶ ԷՍԹ» ՍՊԸ-ի կողմից 02.05.2019թ. թիվ 01/5 հրամանով: Սույնը հանդիսանում է «ԱՐԶ ԷՍԹ» ՍՊԸ-ի և Պատվիրատուի հետ կնքված պայմանագրի անբաժանելի մասը:

զգայական նյարդերով ցավոտ կամ գերզգայուն տարածք: Հաճախ մերսումը և վաղ ոչ վիրահատական միջամտությունը լուծում է սա: Կարևոր է քննարկել հետվիրահատական ցավը Ձեր վիրաբույժի հետ:
Կարևոր է նաև իմանալ, որ վիրահատության հետ կապված է ռիսկեր, այդ թվում և միջին վիրաբուժական մահացության ռիսկը, հնարավոր բարդություններն ու արդյունքները:

Արնահոսություն
Հազվադեպ, բայց հնարավոր է վիրահատության ընթացքում կամ դրանից հետո արնահոսություն ունենալ: Եթե հետվիրահատական արնահոսություն առաջանա, անհրաժեշտ է շտապ բուժում կատարել՝ հավաքված արյունը դատարկելու համար կամ կարող է արյան փոխներարկման անհրաժեշտություն լինի, չնայած, որ նման դեպքերը հազվադեպ են: Վիրահատությունից հետո շատ վաղ ավելացված ակտիվությունը կարող է հանգեցնել արնահոսության և լրացուցիչ վիրահատության հնարավորության մեծացման: Կարևոր է հետևել հետվիրահատական ցուցումներին, կրճատել ֆիզիկական վարժությունները և հոգնեցնող գործողությունները նախատեսված ժամանակի համար: Չընդունել ասպիրին կամ այլ հակաբորբոքային դեղորայք տասը օր վիրահատությունից առաջ և հետո, քանի որ սա կարող է մեծացնել արնահոսության ռիսկը: Առանց դեղատոմսի խոտաբույսերը և սննդային հավելումները կարող են ավելացնել վիրահատական արնահոսության ռիսկը: Հեմատոմա կարող է առաջանալ ցանկացած պահի՝ հաճախ վիրահատական հատվածի վնասվածքից առաջին երեք շաբաթների ընթացքում: Եթե արյան կորուստը կանխելու համար արյան փոխներարկման կարիք կա, առկա է արյան միջոցով փոխանցվող ինֆեկցիաների, հեպատիտի և ՄԻԱՎ-ի ռիսկ: Երակներում արյան հյուսվածքների խցանումները կանխելու համար օգտագործվող հեպարինային դեղորայքը կարող է հանգեցնել արնահոսության և նվազեցված արյան թրոմբոցիտների:
Կրծքային իմպլանտների վիրահատությունների ժամանակ հեմատոման կարող է առաջացնել կափսուլային կոնտրակտուրա, ինֆեկցիա կամ այլ խնդիրներ:

Ինֆեկցիա
Ինֆեկցիան հազվադեպ է վիրահատությունից հետո: Ինֆեկցիայի առաջացման դեպքում լրացուցիչ բուժման, ներառյալ հակաբիոտիկների, հոսպիտալացման կամ լրացուցիչ վիրահատության կարիք կարող է լինել: Կարևոր է հայտնել Ձեր վիրաբույժին այլ ինֆեկցիաների մասին, ինչպիսին են ներաճած եղունգները, միջատների խայթոցները կամ միզուղիների վարակը: Հեռադիր ինֆեկցիաները՝ մարմնի այլ մասերում ինֆեկցիաները, կարող են առաջացնել ինֆեկցիա վիրահատված մասում:

««ԲՈՒԺՇԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՌԻՍԿԵՐ» հավելված թիվ N 2» հաստատված է «ԱՐԶ ԷՍԹ» ՍՊԸ-ի կողմից 02.05.2019թ. թիվ 01/5 հրամանով: Սույնը հանդիսանում է «ԱՐԶ ԷՍԹ» ՍՊԸ-ի և Պատվիրատուի հետ կնքված պայմանագրի անբաժանելի մասը:

Պնդություն
Վիրահատությունից հետո կարող է առաջանալ չափից շատ պնդություն՝ կապված սկզբնական սպիացման հետ: Սրա առաջացումը կանխատեսելի չէ: Լրացուցիչ բուժում, ներառյալ՝ վիրահատություն, կարող է պահանջվել:

Մաշկի գունազրկում/ Ուռածություն
Սովորաբար առաջանում է որոշակի բորբոքում և ուռածություն: Վիրահատական հատվածում կամ դրա շրջանում մաշկը ավելի մուգ կամ բաց գույնի կարող է լինել, քան շրջակա հատվածում: Հազվադեպ, բայց բորբոքումն ու մաշկի գունազրկումը կարող է տևել որոշակի երկարատև ժամանակ, որոշ բացառիկ դեպքերում, նաև մշտական դառնալ:

Մաշկի զգայունություն
Վիրահատությունից հետո կարող է առաջանալ քոր, գերզգայունություն տաք կամ սառը ջերմաստիճանին: Սովորաբար սա լուծվում է վերականգման ընթացքում, բայց բացառիկ դեպքերում կարող է լինել խրոնիկ:

Մեծ վերքերի բաժանում
Վիրահատությունից հետո վերքերը կարող են բացվել: Այդ պարագայում լրացուցիչ բուժում, ներառյալ վիրահատություն կպահանջվի:

Կարեր
Վիրահատական մեթոդների մեծամասնությունը օգտագործում է խորը կարեր: Դուք կարող եք նկատել այս կարերը վիրահատությունից հետո: Կարերը կարող են պատահաբար դուրս գալ մաշկի տակից, դառնալ տեսանելի կամ առաջացնել գրգռում, որը կպահանջի կարերի հեռացում:

Ուշացած ապաքինում
Հնարավոր է վերքերի բացում կամ վերքերի ուշացած ապաքինում: Մաշկի որոշ մասեր կարող են բնականոն ձևով չապաքինվել և ավելի երկար ժամանակ կարող են պահանջել: Մաշկի հատվածներ կարող են մահանալ: Սա կարող է պահանջել վիրակապի հաճախակի փոխում կամ չապաքինվող հյուսվածքները հանելու համար հետագա վիրահատություն: Անձինք, ովքեր ունեն նախկին վիրահատությունից կամ ճառագայթումից հետո նվազեցված արյան շրջանառություն դեպի հյուսվածքներ, կարող են ենթակա լինել վերքերի ուշացած ապաքինման և վատ վիրահատական արդյունքների ավելի մեծ ռիսկի:
Ծխողները ենթակա են մաշկի կորստի և վերքերի ապաքինման բարդությունների ավելի մեծ ռիսկի:

««ԲՈՒԺՇԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՌԻՍԿԵՐ» հավելված թիվ N 2» հաստատված է «ԱՐԶ ԷՍԹ» ՍՊԸ-ի կողմից 02.05.2019թ. թիվ 01/5 հրամանով: Սույնը հանդիսանում է «ԱՐԶ ԷՍԹ» ՍՊԸ-ի և Պատվիրատուի հետ կնքված պայմանագրի անբաժանելի մասը:

Խորը շերտերի վնասում
Ավելի խորը շերտերի և կառուցվածքների, ինչպիսին են նյարդերը, արյունատար անոթները, մկանները և թոքերը, վնասման հնարավորություն կա վիրահատության ժամանակ: Այս հնարավորության առաջացումը կախված է իրականացվող վիրահատության տեսակից: Այս վնասվածքները կարող են լինել ժամանակավոր կամ մշտական:

Ճարպի մահացում (Նեկրոզ)
Մաշկի խորքում գտնող ճարպային հյուսվածքը կարող է մահանալ: Սա կարող է առաջացնել մաշկի մեջ ամրության հատվածներ, որը կարող է առաջացնել ցավ: Կարող է անհրաժեշտ լինել մահացած հյուսվածքների հեռացման լրացուցիչ վիրահատություն: Մաշկի շրջագծի անկանոնությունների հնարավորություն կա, որը առաջանում է ճարպի մահացումից:

Սերոմա
Երբեմն վիրահատությունից, վնասվածքից կամ ուժեղ մարզանքից հետո մաշկի և դրա ստորին հյուսվածքների միջև կարող է հեղուկ հավաքվել: Այդ պարագայում անհրաժեշտ կլինի հեղուկի հեռացման միջոցառումների իրականացում:

Վիրահատական անզգայացում
Եվ տեղային, և ընդհանուր անզգայացումը ենթադրում է ռիսկեր: Վիրահատական անզգայացումից բարդությունների, վնասվածքի և անգամ մահվան հնարավորություն կա:

Շոկ
Հազվադեպ ձեր վիրահատությունը կարող է առաջացնել ուժեղ վնասվածք, մասնավորապես, երբ մի քանի կամ երկարատև միջոցառումներ են իրականացվում: Չնայած լուրջ բարդությունները հազվադեպ են, ինֆեկցիաները կամ հեղուկի չափից դուրս կորուստը կարող է հանգեցնել լուրջ հիվանդության և անգամ մահվան: Երբ վիրահատական շոկ է առաջանում, պահանջվում է հոսպիտալացում և լրացուցիչ բուժում:

Ցավ
Ձեր վիրահատությունից հետո Դուք տարբեր ուժգնության և տևողության ցավ կզգաք: Խրոնիկ ցավ կարող է առաջանալ հազվադեպ՝ վերքերի հյուսվածքներում մնացած նյարդերից կամ հյուսվածքների ձգման հետևանքով:

««ԲՈՒԺՇԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՌԻՍԿԵՐ» հավելված թիվ N 2» հաստատված է «ԱՐԶ ԷՍԹ» ՍՊԸ-ի կողմից 02.05.2019թ. թիվ 01/5 հրամանով: Սույնը հանդիսանում է «ԱՐԶ ԷՍԹ» ՍՊԸ-ի և Պատվիրատուի հետ կնքված պայմանագրի անբաժանելի մասը:

Սրտանոթային և շնչառական բարդություններ
Շնչառական բարդություններ՝ թոքային էմբոլիա, կարող են առաջանալ ընդհանուր անզգայացումից հետո արյան մակարդուկներից, ճարպային էմբոլիաներից կամ թոքերի աշխատանքի մասնակի խափանումից հետո: Անշարժությունը և այլ հանգամանքները կարող են մեծացնել արյան մակարդուկների անցումը դեպի թոքեր՝ առաջացնելով արյան մեծ մակարդուկ, որը կարող է առաջացնել մահ: Կարևոր է Ձեր բժշկի հետ քննարկել նախկինում Ձեր ոտքերի ուռածության կամ արյան մակարդուկների պատմությունը, որը կարող է նպաստել այս կարգավիճակին: Սրտանոթային բարդությունները անզգայացմամբ կատարվող ցանկացած վիրահատության ժամանակ ռիսկ են ներկայացնում, անգամ առանց նախանշանների հիվանդների մոտ: **Եթե Դուք դժվարանում եք շնչել, ունեք ցավեր կրծքավանդակի շրջանում կամ անսովոր սրտի ռիթմ, ապա անմիջապես դիմեք բժշկական օգնության:** Այս բարդություններից ցանկացածի առաջացման դեպքում անհրաժեշտ կլինի հոսպիտալացում և լրացուցիչ բուժում: Թոքային էմբոլիան կյանքին սպառնացող բարդություն է և կարող է դառնալ մահվան պատճառ:

Երակային թրոմբոզ և հետևանքներ
Թրոմբոզված երակները, որոնք նման են լարերի, երբեմն առաջանում են կրծքերի կամ ներերակային ներարկումների շրջաններում, և սովորաբար լուծվում են առանց բժշկական կամ վիրահատական միջամտության: Կարևոր է քննարկել Ձեր վիրաբույժի հետ Ձեր կողմից ընդունվող ցանկացած վերարտադրությունը հսկող դեղահաբերը: Որոշ բարձր էսթրոգենով հաբեր կարող են մեծացնել թրոմբացված երակների ռիսկը:

Ալերգիկ ռեակցիաներ
Հազվադեպ արձանագրվել են կարերի նյութի, վիրահատական սոսնձի,կպչուն ժապավենի, արյան տարբեր բաղադրիչների, ներարկվող նյութերի հետ կապված տեղային ալերգիկ ռեակցիաներ: Լուրջ համակարգային ռեակցիաներ, ներառյալ շոկը՝ անաֆիլաքսիա, կարող են առաջանալ վիրահատությունների ժամանակ օգտագործված կամ դրանից հետո նշանակված դեղերից: Ալերգիկ ռեակցիաները կարող են պահանջել լրացուցիչ բուժում:

Ասիմետրիա
Վիրահատությունից հետո մարմինը սիմետրիկ տեսք չի ունենա: Այնպիսի գործոններ, ինչպիսիք են մաշկի գույնը, ճարպի պաշարները, կմաղքային կառուցվածքը և մկանային զանգվածը կարող են ազդել մարմնի բնականոն սիմետրայի վրա: Հիվանդների միջամասնության մոտ մարմնի աջ և ձախ կեսի ասիմետրիան առկա է մինչև վիրահատությունը: Լրացուցիչ վիրահատություն կարող է անհրաժեշտ լինել ասիմետրիան նվազեցնելու համար:

««ԲՈՒԺՄԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՌԻՍԿԵՐ» հավելված թիվ N 2» հաստատված է «ԱՐԶ ԷՍԹ» ՍՊԸ-ի կողմից 02.05.2019թ. թիվ 01/5 հրամանով: Սույնը հանդիսանում է «ԱՐԶ ԷՍԹ» ՍՊԸ-ի և Պատվիրատուի հետ կնքված պայմանագրի անբաժանելի մասը:

Վիրահատական խոնավեցնող լուծույթներ
Հավանականություն կա, որ վիրահատության ժամանակ ճարպային շերտեր ներարկված մեծ քանակությամբ նոսրացնող անզգայացնող դեղերը և էփինեֆրինը, կարող են հանգեցնել հեղուկի մեծաքանակ ավելցուկի կամ այս դեղերի նկատմամբ համակարգային ռեակցիայի: Կարող է պահանջվել լրացուցիչ բուժում, ներառյալ հոսպիտալացում:

Կայուն ուռածություն (Լիմֆադեմա)
Ոտքերում կայուն ուռածություն կարող է առաջանալ վիրահատությունից հետո:

Ոչ գոհացուցիչ արդյունք
Չնայած լավ արդյունքներ են ակնկալվում, ստացվելիք արդյունքների կապակցությամբ արտահայտված կամ ենթադրյալ երաշխիք չկա: Դուք կարող եք հիասթափված լինել վիրահատության արդյունքներից: Վիրահատությունից հետո կարող է առաջանալ պտուկի տեղակայման ասիմետրիա, չակնկալվող չափ և ձև, ֆունկցիայի կորուստ, վերքի բացվածք, վատ լավացում և զգայունության կորուստ: Չափը կարող է ոչ ճիշտ լինել: Կարող են առաջանալ ոչ գոհացուցիչ վիրահատական սպիեր կամ տեսանելի դեֆորմացիաներ: Լրացուցիչ վիրահատությունների անհրաժեշտություն կարող է լինել՝ Ձեր արդյունքները բարելավելու նպատակով:
Պտուկի վերականգնումը կարող է չհաջողվել նախկինում տարած կրծքերի վիրահատությունների և քիմիոտերապիայի և ճառագայթային բուժում տարած լինելու հետևանքով:

<u>Հավելյալ խորհուրդներ</u>
Ծխելը, պասիվ ծխելը, նիկոտինային ապրանքները (կապեր, մաստակներ, քթի կաթիլներ, էլեկտրոնային սիգարետ)
Ներկայումս ծխող, թութուն կամ նիկոտինային ապրանքներ օգտագործող հիվանդները մաշկի մահացության, ուշացած ապաքինման և հավելյալ սպիերի տեսքով վիրահատական բարդությունների ավելի մեծ ռիսկի են ենթակա: Բացի այդ, ծխելը կարող է բավականին վատ ազդեցություն ունենալ անզգայացման և դրանից վերականգման վրա՝ առաջացնելով հազ և հնարավոր բարձր արյան ճնշում: Ծխախոտի ծխի կամ նիկոտին պարունակող ապրանքների ազդեցությունից զերծ մնացած անհատները նման բարդությունների զգալիորեն ավելի ցածր ռիսկ ունեն:

«ԲՈՒԺՇԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՌԻՍԿԵՐ» հավելված թիվ N 2» հաստատված է «ԱՐԶ ԷՍԹ» ՍՊԸ-ի կողմից 02.05.2019թ. թիվ 01/5 հրամանով: Սույնը հանդիսանում է «ԱՐԶ ԷՍԹ» ՍՊԸ-ի և Պատվիրատուի հետ կնքված պայմանագրի անբաժանելի մասը:

Դեղորայք և բուսական սննդային հավելումներ
Առանց դեղատոմսի, բուսական և/կամ նշանակված դեղորայքի օգտագործման հետ կապված առկա է բացասական հետևանքների հնարավոր ռիսկ: Ասպիրինը և ասպիրին պարունակող դեղորայքը ներազդում է արյան մակարդմանը և կարող է առաջացնել ավելի մեծ արյունահոսություն: Շատ կարևոր է չդադարեցնել թրոմբոցիտների վրա ներազդող դեղորայքի ընդունումը, որը կարող է նշանակվել ստենտից հետո: Ճշտեք Ձեր բժշկի հետ Ձեր կողմից ընդունվող դեղորայքի հետ կապված որևէ փոխզդեցությունը: Եթե բացասական ազդեցություն եք նկատում, դադարեցրեք դեղերի ընդունումն անմիջապես և զանգահարեք Ձեր պլաստիկ վիրաբույժին հետագա ցուցումների համար: Եթե ազդեցությունը լուրջ է, անմիջապես գնացեք մոտակա հիվանդանոց: Վիրահատությունից հետո նշանակված ցավազրկող դեղերն ընդունելիս գիտակցեք, որ նրանք կարող են ազդել Ձեր մտածողության գործընթացի և կոորդինացիայի վրա: Մեքենա մի վարեք, մի աշխատացրեք բարդ համակարգեր, կարևոր որոշումներ մի կայացրեք և ալկոհոլ մի օգտագործեք այս դեղերն ընդունելու ընթացքում: Հավաստիացեք, որ ընդունում եք նշանակված դեղորայքը ցուցումներին համապատասխան:

Արևի ազդեցություն՝ ուղղակիորեն կամ սոլյարիում
Արևի ազդեցությունը վնասում է մաշկը: Վիրահատված մասերը արևի ազդեցության ենթարկելը կարող է առաջացնել հավելյալ վերքեր, գունափոխություն և վատ ապաքինում: Արևային լոգանք ընդունող հիվանդները պետք է տեղեկացնեն իրենց բժիշկներին և հետաձգեն կամ դադարեցնեն դա, մինչև բժիշկը դա կհամարի վերսկսելու համար ապահով: Արևի ազդեցության բացասական հետևանքներն առաջանում են անգամ նաև համապատասխան քսուկների կամ հագուստի օգտագործման դեպքում:

Ճամփորդական ծրագրեր
Ցանկացած վիրահատություն բարդությունների ռիսկեր է պարունակում, որը կարող է հետաձգել ապաքինումը և Ձեր վերադարձը նորմալ կյանքին: Խնդրում ենք տեղեկացնել Ձեր վիրաբույժին ցանկացած ճամփորդական ծրագրերի, արդեն պլանավորված կամ ծրագրավորված կարևոր գործերի կամ ժամանակային պահանջների մասին, որոնք կարևոր են Ձեր համար, որպեսզի վիրահատությունը համապատասխան պահի նշանակվի: Երաշխիքներ չկան, որ Դուք կկարողանաք վերսկսել բոլոր գործողությունները ցանկալի ժամկետներում:

Կրծքերի հիվանդություններ
Ներկա բժշկական հետազոտությունները ցույց չեն տալիս, որ կոսմետիկ կամ վերականգնման նպատակով կրծքային իմպլանտի վիրահատության ենթարկված կանանց մոտ առկա է կրծքագեղձի քաղցկեղի ավելի մեծ ռիսկ: Կրծքային հիվանդությունները և

«ԲՈՒԺՄԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՌԻՍԿԵՐ» հավելված թիվ N 2» հաստատված է «ԱՐԶ ԷՍԹ» ՍՊԸ-ի կողմից 02.05.2019թ. թիվ 01/5 հրամանով: Սույնը հանդիսանում է «ԱՐԶ ԷՍԹ» ՍՊԸ-ի և Պատվիրատուի հետ կնքված պայմանագրի անբաժանելի մասը:

կրծքագեղձի քաղծկեղը կարող են առաջանալ կրծքային վիրահատությունից անկախ: Կրծքագեղձի քաղծկեղի անձնական կամ ընտանեկան պատմությամբ անձինք այդպիսի քաղծկեղ ձևավորելու ավելի մեծ վտանգի առջև են, քան առանց նման պատմության անհատները: Կանայք պետք է իրենց կրծքերի ինքնահետազոտություններ անցկացնեն, մամոգրաֆիա անցնեն և մասնագիտական խնամքի դիմեն:

Երկարաժամկետ արդյունքներ
Կրծքերի ձևի հետ կապված հետագա ձևափոխություններ կարող են առաջանալ ծերացման, արևի ազդեցության, քաշի ավելացման և նվազեցման, հղիության, մենոպաուզայի կամ վիրահատության հետ չկապված այլ հանգամանքների արդյունքում:

Մոտակա ավշային հանգույցների քարտեզագրման միջամտության համատեղում
Կրծքերի այն վիրահատությունները, որոնք ներառում են կրծքային հյուսվածքների կտրումը, կարող են համատեղել դիագնոստիկ միջամտության հետ՝ կրծքագեղձի քաղծկեղի աստիճանը ախտորոշելու նպատակով(լիմֆատիկ հանգույցի բիոփսիա):

Կրծքերի և պտուկների պիրսինգ
Այն անձինք, ովքեր ներկայումս մարմնի պիրսինգ են կրում վիրահատված շրջանում, զգուշացվում են, որ դրա հետևանքով հնարավոր է ինֆեկցիայի առաջացում:

Կրծքով կերակրել
Մաստեկտոմիայի ենթարկված կինը անհավանական է, որ կկարողանա կերակրել այն կրծքով, որը հեռացվել է: Վերականգնված պտուկները չեն կարող օգտագործվել կերակրելիս:

Տեղեկատվություն կին հիվանդների համար
Կարևոր է տեղեկացնել Ձեր պլաստիկ վիրաբույժին, եթե Դուք օգտագործում եք վերարտադրողականությունը կարգավորող դեղեր, էստրոգենի փոխարինողներ կամ կասկածում եք, թե հղի եք: Շատ դեղեր, ներառյալ հակաբիոտիկները, կարող են չեզոքացնել վերարտադրողականությունը կարգավորող դեղերի ազդեցությունը՝ հնարավոր դարձնելով հղիությունը:

Վիրահատությունից հետո սեռական հարաբերություններ
Վիրահատությունը ներառում է արյունատար անոթների կոագուլյացիա՝ այրում, և որևէ տեսակի ուժեղացված ակտիվությունը կարող է բացել այս անոթները՝ առաջացնելով արնահոսություն կամ հեմատոմա: Ակտիվությունը, որն ավելացնում է Ձեր պուլսը կամ

«ԲՈՒԺԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՌԻՍԿԵՐ» հավելված թիվ N 2» հաստատված է «ԱՐԶ ԷՍԹ» ՍՊԸ-ի կողմից 02.05.2019թ. թիվ 01/5 հրամանով: Սույնը հանդիսանում է «ԱՐԶ ԷՍԹ» ՍՊԸ-ի և Պատվիրատուի հետ կնքված պայմանագրի անբաժանելի մասը:

սրտի աշխատանքը, կարող է առաջացնել լրացուցիչ բորբոքում, ուռածություն, կապտուկները, նոր վիրահատության կարիք և արնահոսության կանգնեցում: Խելամիտ է ձեռնպահ մնալ սեռական ֆիզիկական ակտիվությունից, քանի դեռ Ձեր բժիշկը չի նշել, որ դա անվտանգ է:

Հոգեկան առողջության խնդիրներ և ընտրովի վիրահատություն
Կարևոր է, որ ընտրովի վիրահատության ենթարկվելու ցանկացող բոլոր հիվանդները ունենան բարելավման, ոչ թե կատարելության վրա կենտրոնացած իրատեսական սպասելիքներ: Բարդությունները կամ ոչ այնքան գոհացնող արդյունքները երբեմն անխուսափելի են, կարող են պահանջել լրացուցիչ վիրահատություն և հաճախ սթրեսային են: Խնդրում ենք Ձեր վիրաբույժի հետ վիրահատությունից առաջ բացահայտորեն քննարկել էմոցիոնալ դեպրեսիայի կամ հոգեկան առողջության խնդիրների հնարավոր լուրջ նախկին դեպքերը: Չնայած շատ անհատների համար հոգեբանորեն ընտրովի վիրահատության արդյունքները շահեկան կլինեն, հոգեկան առողջության վրա դրանց ազդեցությունը հնարավոր չէ ճշգրիտ կանխատեսել:

<u>Լրացուցիչ վիրահատության կարիք (կրկնակի վիրահատություններ)</u>
Պտուկների վերականգնման վիրահատության երկարաժամկետ արդյունքների վրա ազդող բազում գործոններ կան: Երկրորդային վիրահատություն կարող է պահանջվել մարմնի լրացուցիչ ձգման կամ տեղափոխման համար: Բարդությունների դեպքում լրացուցիչ վիրահատություն կամ այլ բուժումներ կպահանջվեն: Չնայած ռիսկեր և բարդություններ առաջանում են հազվադեպ, վերոգրյալ ռիսկերը հատկապես վերաբերում են այս վիրահատությանը: Այլ բարդություններ և ռիսկեր կարող են առաջանալ, բայց ավելի հազվադեպ են: Բժշկության և վիրահատության կիրառումը ճշգրիտ գիտություն չէ: Չնայած լավ արդյունքներ են ակնկալվում, սպասվող արդյունքի բացահայտ կամ ենթադրյալ երաշխիք չկա: Որոշ դեպքերում հնարավոր չի լինի հասնել օպտիմալ արդյունքի մեկ վիրահատությամբ:

<u>Հիվանդի կողմից ցուցումներին հետևելը</u>
Հետևեք բժշկի բոլոր ցուցումներին, սա կենսական է Ձեր արդյունքների հաջողության համար: Կարևոր է, որ վիրահատական կտրվածքները ապաքինման ժամանակ չենթարկվեն չափազանց մեծ ուժի, ուռածության, ճանկռվածության, շարժման կամ վնասման: Անձնական և մասնագիտական գործունեությունը պետք է սահմանափակել: Պաշտպանիչ վիրակապերը չպետք է հեռացվեն, քանի դեռ վիրաբույժը այդպիսի ցուցում չի տվել: Հետվիրահատական հաջողված արդյունքները կախված են վիրահատությունից և հետվիրահատական խնամքից: Ձեր պուլսը կամ սրտի աշխատանքը արագացնող ակտիվությունը կարող է առաջացնել ուռածություն, բորբոքում, հեղուկի հավաքում և

«ԲՈՒԺՇԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՌԻՍԿԵՐ» հավելված թիվ N 2» հաստատված է «ԱՐԶ ԷՍԹ» ՍՊԸ-ի կողմից 02.05.2019թ. թիվ 01/5 հրամանով: Սույնը հանդիսանում է «ԱՐԶ ԷՍԹ» ՍՊԸ-ի և Պատվիրատուի հետ կնքված պայմանագրի անբաժանելի մասը:

կրկնակի վիրահատության անհրաժեշտություն: Խելամիտ է ձեռնպահ մնալ սեռական ֆիզիկական ակտիվությունից, քանի դեռ Ձեր բժիշկը չի նշել, որ դա անվտանգ է: Կարևոր է, որ Դուք մասնակցեք հետագա ապաքինմանը, վերադառնաք ստուգումների համար և հետևեք Ձեր բուժմանը վիրահատությունից հետո:

<u>Ծանուցում</u>

Տեղեկացված համաձայնության փաստաթղթերն օգտագործվում են հիվանդության բուժման համար առաջարկվող վիրահատության, ներառյալ դրա ռիսկերի, այլընտրանքային բուժումների, այդ թվում՝ առանց վիրահատության, վերաբերյալ տեղեկատվություն հաղորդելու համար: Այս գործընթացը փորձում է բնորոշել ռիսկերի բացահայտման սկզբունքները, որոնք կհամապատասխանեն հիվանդների կարիքներին հիմնականում բոլոր պայմաններում:

Այնուամենայնիվ, այս փաստաթղթերը չպիտի համարվեն լրիվ ներառական փաստաթղթեր, որոնք կընդգրկեն բոլոր այլ մեթոդները և դրանց ռիսկերը: Ձեր պլաստիկ վիրաբույժը կարող է տրամադրել հավելյալ տարբերվող տեղեկատվություն, որը հիմնվում է Ձեր գործի վրա և ներկա պահին բժշկական մտքի վրա:

Այս փաստաթղթերը նպատակ չունեն սահմանելու կամ ապահովելու բժշկական սպասարկման ստանդարտներ:

Կարևոր է, որ Դուք կարդաք վերոգրյալ ամբողջ տեղեկատվությունը և ստանաք Ձեր բոլոր հարցերի պատասխանները:

««ԲՈՒԺՇԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՌԻՍԿԵՐ» հավելված թիվ N 2» հաստատված է «ԱՐԶ ԷՍԹ» ՍՊԸ-ի կողմից 02.05.2019թ. թիվ 01/5 հրամանով: Սույնը հանդիսանում է «ԱՐԶ ԷՍԹ» ՍՊԸ-ի և Պատվիրատուի հետ կնքված պայմանագրի անբաժանելի մասը: